ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍԿԱՐԻ ԱՍՂԱՐԻԳԱՆՁԻ

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԼՈԿՈՒՍԻ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժ Թ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կամո Վարդանյան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելս Մկրտումյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Պողոսյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. մայիսի 6-ին, ժ. 12.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. ապրիլի 4-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ

Կ. Ե.Վարդանյան

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը**

Ընտանեկան և ամուսնական խնդիրները մարդկության պատմության մեջ նույնքան հին են, որքան ընտանիք կառույցի ձևավորման ու զարգացման պատմությունը: Ոչ մի փոխհարաբերության պահպանումն ու հարատևումը, թերևս, այնքան բարդ չէ, որքան ամուսնական փոխհարաբերության պահպանումը:

Ամուսնական զույգերին մշտապես հետաքրքրել է հետևյալ հարցը՝ _որտեղի՞ց են սկիզբ առնում ամուսնական կյանքի դժվարությունների արմատները|: Տարբեր ժամանակահատվածներում մասնագետները տարբեր ելքեր ու միջոցներ են առաջարկել ամուսինների բազմաբնույթ դժվարությունների հաղթահարման համար, բազմաթիվ բացատրություններ են տրվել ամուսնալուծությունների օրեցօր աճող ցուցանիշների պատճառների մասին: Ընդհանուր առմամբ, բոլոր հետազոտություններն ու դիտարկումները մատնանշում են ժամանակակից կյանքում ամուսնական կապերի թուլացման փաստը, սակայն չեն բացատրում ներկա պայմաններում ամուսնությունների մի մասի գոյատևման և մյուս մասի բաժանման ու կազմալուծման պատճառները: Հաջող և բավարարված ամուսնական դաշինքը կամ անհաջող ամուսնությունները և ամուսնական դժվարությունները մինչև հիմա ամբողջապես չեն լուսաբանվել, և այս առումով բազմաթիվ հարցեր կան, որոնք որոշարկման կարիք են զգում:

Ամուսնական բավարարվածությունը համատեղ կյանքի հարատևման կամ քայքայման գլխավոր գործոններից մեկն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զույգերի մոտ ամուսնական կյանքից ունեցած անբավարարվածությունը ամուսնալուծության և բաժանման հիմնական պատճառներից մեկն է: Ամուսնական բավարարվածության մեջ իրենց դերակատարությունն ունեն տարբեր գործոններ ու փոփոխականներ, որոնց շարքում իր առանձնահատուկ նշանակությունն ունի վերահսկողության լոկուսը՝ լոկուս կոնտրոլը, այսինքն իրադարձությունների ու իրողությունների կառավարման ու վերահսկման սկզբնակետը: Ամուսնական բավարարվածության հարցը ուսումնասիրվել է տարբեր հոգեբանական ուղղությունների կողմից, իսկ վերջին շրջանում այն դիտարկվում է նաև լոկուս կոնտրոլի՝ վերահսկողության լոկուսի տեսանկյունից:

Ընտանեկան կյանքի հարատևման հարցերի կարևորությունը, ամուսնական կյանքի խնդիրների պատճառների բացահայտման անհրաժեշտությունը և իրանական հասարակության մեջ այս հարցերի հրատապությունը չափազանց արդիական են դարձնում հետազոտության թեման:

**Հետազոտության նպատակն** է ուսումնասիրել և վեր հանել վերահսկողության լոկուսի, նրա արտաքին կամ ներքին լինելու դերն ու ազդեցությունն ամուսնական կյանքում և ամուսնական բավարարվածության մակարդակի համատեքստում:

**Հետազոտության հիմնական վարկածը**

Եթե խթանվի ամուսնական զույգերի վերահսկողության ներքին լոկուսը, ապա նրանց մոտ կբարձրանա ամուսնական կյանքից ունեցած բավարարվածության մակարդակը:

**Հետազոտության ենթավարկածները**

●Եթե ամուսինները ունենան կրթական ավելի բարձր մակարդակ, նրանց վերահսկողության լոկուսը կլինի ներքին:

●Եթե ամուսնական զույգերն ունենան կրթական ավելի բարձր մակարդակ, ապա նրանց մոտ ամուսնական բավարարվածության մակարդակը բարձր կլինի:

●Եթե զույգերի տարիքը և ամուսնության վաղեմությունը մեծ լինեն, ապա նրանց ամուսնական բավարարվածության մակարդակը բարձր կլինի:

●Վերահսկողության ներքին լոկուս ունեցող զույգերի ամուսնական բավարարվածության մակարդակն ավելի բարձր է, քան արտաքին լոկուս ունեցողներինը:

●Արական և իգական սեռի ներկայացուցիչների մոտ առկա է վերահսկողության լոկուսի տեսակի տարբերություն:

●Արական և իգական սեռի ներկայացուցիչների մոտ առկա է ամուսնական բավարարվածության մակարդակի տարբերություն:

**Հետազոտության խնդիրները**

Ելնելով վերոնշյալ նպատակից և վարկածից առաջադրվել են մի շարք խնդիրներ.

1.Ուսումնասիրել և լուսաբանել «վերահսկողության լոկուս» հասկացությունը, տալ դրա սահմանումները, գործառույթները, հոգեբանական տարբեր տեսությունների մոտեցումներն ու մեկնաբանություններն այդ հարցի շուրջ:

2.Ուսումնասիրել թեմայի մշակվածության աստիճանը, միջազգային և իրանական մասշտաբներով կատարված նախորդ ուսումնասիրությունները, վեր հանել հիմնախնդրի առաջադրման և զարգացման անցած ուղին:

3.Ուսումնասիրել և քննել ամուսնության և ընտանիքի կազմության տարբեր կողմերը, ընտանիքի տեսակները և գործառույթները:

4.Վերլուծել զույգերի փոխհարաբերություններում առկա հիմնախնդիրները, տարբեր դժվարությունների առաջացման դրդապատճառները և ոլորտները:

5.Վերլուծել ամուսնական բավարարվածություն հասկացությունը, տալ դրա հոգեբանական, անձնային, հաղորդակցական և այլ կողմերն ու գործոնները:

6.Մեկնաբանել վերահսկողության լոկուս հասկացությունը, բացահայտել դրա դերն ու նշանակությունն ամուսնական կյանքում և ամուսնական բավարարվածության ձևավորման գործում, բացահայտել ներքին վերահսկողության ազդեցությունն ամուսնական կյանքի բարելավման և ամուսնական բավարարվածության բարձրացման ուղղությամբ:

7.Իրականացնել թեստավորում և ռեթեստավորում ամուսնական բավարարվածության և վերահսկողության լոկուսի վերաբերյալ Իրանի Մազանդարան

նահանգի Մանկավարժական համալսարանի 100 ամուսնական զույգերի շրջանում և արդյունքները ենթարկել մշակման ու վերլուծության:

**Հետազոտության օբյեկտը**

Ամուսնական բավարարվածության և ամուսինների վերահսկողության լոկուսի հոգեբանական հիմքերն ու բաղադրիչներն են:

**Հետազոտության առարկան** ամուսնական զույգերի ամուսնական բավարարվածության բարձրացման և համատեղ կյանքի խնդիրների լուծման ուղղությամբ վերահսկողության լոկուսի ներքին և արտաքին լինելու ազդեցության ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, նաև ամուսինների տարբեր հատկանիշների՝ սեռի, տարիքի, ամուսնության տարիների և կրթության մակարդակի փոխկապակցվածությունը լոկուս կոնտրոլի և ամուսնական բավարարվածության հետ:

**Հետազոտության բազան և ընտրանքը**

Հետազոտության բազան կամ համախումբը կազմում են Իրանի Մազանդարան նահանգի Մանկավարժական համալսարանում սովորող բոլոր ամուսնացած ուսանողները, որոնցից պատահականության սկզբունքով ընտրվել են 100 ուսանողներ (ովքեր նաև ուսուցիչներ են) իրենց զուգընկերոջ հետ՝ ընդհանուր առմամբ 200 մարդ:

**Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքերը**

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են Ջուլիան Ռոթերի սոցիալական յուրացման տեսությունը, Գլասերի «ընտրության տեսութունը», Էնրիչի ամուսնական բավարարվածության մասին կատարված ուսումնասիրությունները և մոտեցումները, ինչպես նաև տարբեր մասնագետների ու հետազոտողների կատարած աշխատությունները՝ ամուսնական բավարարվածության, վարքի կառավարման, միջանձնային հարաբերությունների և ընտանեկան հարցերի վերաբերյալ:

**Խնդրի մշակվածության աստիճանը**

«Վերահսկողության լոկուս» հասկացությունը, որպես այդպիսին, հոգեբանության մեջ առաջին անգամ պաշտոնապես կիրառվել է 1954 թվականին՝ Ջուլիան Ռոթերի կողմից: Ռոթերն «Անձի սոցիալական յուրացման» իր տեսության մեջ առաջադրեց «լոկուս կոնտրոլ» հասկացությունը: Ռոթերը փորձում էր բացատրել և հիմնավորել վարքն ու անհատականությունն օրգանիզմի ներսում և դրսում, որոշարկել արտաքին խթանիչները և ներքին իմացական (ճանաչողական) գործընթացները: Ռոթերն իր հետազոտական լայնածավալ աշխատանքներում նկատեց, որ մարդկանց մի խումբը դրդապատճառները կամ խթանիչ գործոնները փնտրում է սեփական անձի մեջ, մինչդեռ մյուսների համոզմամբ, իրենց դրդապատճառները վերահսկվում են այլ մարդկանց կամ արտաքին ազդակների կողմից: Ռոթերն սկզբում այդ երևույթն անվանեց «խթանման վերահսկում», այնուհետև վերանվանեց «վերահսկողության սկզբնակետ կամ լոկուս»:

Ռոթերի կարծիքով, ճակատագրի և դեպքերի դրդապատճառների մասին յուրաքանչյուր մարդու սեփական ընկալումներից ու պատկերացումից է կախված, թե տվյալ անձը որտեղ է փնտրում վերահսկման աղբյուրը՝ իր ներսում, թե՝ դրսում: Հոգեբանության տեսաբանների կողմից տարբեր սահմանումներ են տրվել վերահսկողության լոկուսին՝ լոկուս կոնտրոլին:

Վերահսկողության լոկուսի նկատմամբ հետաքրքրությունն ավելի մեծացավ, երբ հետազոտողներն սկսեցին վարքի դրդապատճառների կամ մոտիվացիաների վերաբերյալ ավելի լայն ուսումնասիրություններ և լաբորատոր գիտափորձեր կատարել: 1970-ականների ավարտին Վիլիամ Փավերզի աշխատությունների միջոցով Գլասերը ծանոթացավ կոնտրոլի տեսության հետ, այնուհետև 1995-1998 թթ. առաջադրեց հոգեբանական նոր տեսություն, որն անվանեց «Ընտրության տեսություն»՝ արժանի ծառայություն մատուցելով մարդկային վարքը տարբեր իրավիճակներում հասկանալու փորձերին: «Ընտրության տեսությունը» հիմնված է այն դրույթի վրա, որ մենք ինքներս ենք վերահսկում մեր սեփական անձը և մենք ենք այն անձը, ում վարքը վերահսկվում ու ղեկավարվում է մեր կողմից:

Ընտրության տեսության համաձայն, մենք ենք ընտրում մեր բոլոր գործողություններն ու հոգեվիճակները, այդ թվում նաև դժբախտ լինելու զգացումը: Ուրիշները ո՛չ կարող են մեզ երջանկացնել, ո՛չ էլ դժբախտացնել, մենք ընդամենը ուրիշներից վերցնում կամ ուրիշներին տալիս ենք ինֆորմացիա: Սակայն ինֆորմացիան ինքնին և ինքնաբերաբար չի կարող մեզ մղել որևէ գործ կատարել կամ զգացողություն ունենալ: Մենք ենք ընտրում ինչպես վերաբերվել այդ ինֆորմացիային կամ ինչպիսի և ինչ ծավալի ինֆորմացիա տրամադրել ուրիշներին: Մենք պատասխանատու ենք միայն մեր ընտրությամբ կատարված գործերի համար: Որքան փոխենք սեփական վարքը և հրաժարվենք ուրիշներին իրենց համար ոչ ցանկալի արարքներ պարտադրելուց, այդքան ավելի լավ փոխհարաբերություններ կկառուցենք մարդկանց հետ:

Գլասերն ամուսինների հետ զուգահեռաբար և միասին է անցկացնում հոգեբանական-խորհրդատվական աշխատանքը՝ նպատակ ունենալով կրճատել զույգերի վերահսկողությունը մեկը մյուսի նկատմամբ՝ փոխարեն նրանցից յուրաքանչյուրի ուշադրությունն ուղղորդելով սեփական անձի վերահսկման կողմը: Ամուսինների հետ զուգահեռ և համատեղ բուժում-թրեյնինգ իրականացնելով՝ Գլասերն իր առջև նպատակ է դնում զույգերի մոտ սահմանափակել արտաքին վերահսկողության հոգեբանությունը և խթանել ներքին վերահսկողության հոգեբանությունը: Այս մեթոդով ամուսինները կարող են լուծել իրենց կոնֆլիկտները և հասնել ամուսնական կյանքի բավարարման ավելի բարձր մակարդակի:

«Վերահսկողության լոկուսի կամ սկզբնակետի և դիրքի» հասկացությունն այնքան հին պատմություն ունի, որքան ինքը՝ մարդկային քաղաքակրթությունը, սակայն գիտական մշակման աստիճանով՝ այն բավականին երիտասարդ տեսություն է: Այս ոլորտում անհրաժեշտ է համալիր ուսումնասիրություններ կատարել:

**Հետազոտության մեթոդները**

Այս հետազոտությունն ընդհանուր առմամբ փորձարարական հետազոտություն է, սակայն քանի որ լոկուս կոնտրոլի և ամուսնական կյանքի բավարարվածության միջև հարաբերակցությունն ուսումնասիրվել է փորձարկվողների տարբեր խմբերում (ըստ տարիքի, սեռի և կրթության մակարդակի) այն համարվում է նաև համահարաբերակցական աշխատանք: Լոկուս կոնտրոլի ազդեցությունն ամուսնական

բավարարվածության վրա առավել ճշգրտորեն գնահատելու նպատակով ուսումնասիրվող փոփոխականները համախմբելուց և միատարր դարձնելուց հետո նշված բազայից, այսինքն Մազանդարան նահանգի մանկավարժական համալսարանի ամուսնացած ուսանողների միջից բազմափուլ կլաստերային պատահականության մեթոդով ընտրվել են 100 զույգեր: Այնուհետև, լոկուս կոնտրոլի ազդեցությունն ամուսնական բավարարվածության վրա առավել ճշգրտորեն գնահատելու նպատակով փորձնական կերպով ընտրվել են 20 զույգեր: Ուսումնասիրող փոփոխականները միատարր դարձնելուց հետո այդ զույգերը պատահականության սկզբունքով բաժանվել են երկու խմբի՝ 10 զույգ փորձարկվող խմբում և 10 զույգ ստուգիչ խմբում:

Սույն հետազոտության մեջ ուսումնասիրվող փոփոխականների չափման համար կիրառվել են հինգ գործիքներ.

1. Էնրիչի (ENRICH)՝ ամուսնական բավարարվածությունը գնահատող թեստը,
2. Ամուսնական հարմարման Սպայների թեստը (DAS)
3. Ռոթերի՝ լոկուս կոնտրոլը գնահատող թեստը (I-E),
4. Մեր կողմից կազմված հարցաթերթը,
5. Ժողովրդագրական տվյալների հարցաթերթը:

Այս թեստերի միջոցով, նպատակ ունենք բացահայտել, թե արդյոք Ռոթերի հարցաթերթիկով գնահատված ներքին կոնտրոլ ունեցող ամուսինների և Էնրիչի թեստով ու Սպայների ամուսնական հարմարման թեստի միջոցով գնահատված ամուսնական բավարարվածություն ունեցող ամուսինների միջև կա՞ որևէ փոխներգործություն կամ համահարաբերակցություն: Այս եղանակով փորձում ենք քննել և բացահայտել լոկուս կոնտրոլի միջոցով ամուսնական բավարարվածությունը կանխատեսելու հնարավորությունը և հավանականությունը:

Ստացված տվյալները ենթարկվել են վիճակագրական բնութագրական խմբավորման՝ քանակի, տոկոսների, միջինների, ստանդարտից շեղումների որոշարկում, իսկ տվյալների երկրորդական մշակման նպատակով կիրառվել են մաթեմատիկական համակարգչային մեթոդներ՝ Պիրսոնի համահարաբերակցության գործակից, անկախ T թեստ, Անովա, Ֆիշերի փորձարկում, Ռեգրեսիոն բազմափոփոխական վերլուծություն և Կովարիանսի վերլուծություն:

**Հետազոտության գիտական նորույթը**

**1.** Հետազոտության մեջ ամուսնական կյանքի խնդիրների պատճառներն ու արմատները և ամուսնական բավարարվածության մակարդակը վերլուծվել ու գնահատվել են նոր և Իրանում առավել նվազ հետազոտված մոտեցմամբ՝ վերահսկողության լոկուսի ներքին կամ արտաքին լինելու տեսանկյունից, և այդ հարցում մի շարք փոփոխականների՝ սեռի, տարիքի, կրթության աստիճանի և ամուսնության վաղեմության գործոնների ներառմամբ:

**2.** Հետազոտության մեջ գիտական կարևոր նորույթ է համարվում ընտանիքի թերապիայի գործում վերահսկողության լոկուսի վրա հիմնված հոգեբանական մոտեցման առաջադրումը և ներգրավումը:

**3.** Ամուսնության պատրաստվող զույգերի համար ամուսնական խորհրդատվության մոդելի առաջադրում՝ ըստ վերահսկողության հոգեբանական մոտեցման, որտեղ փորձարկվում և գնահատվում է ամուսնացող զույգերի վերահսկողության սկզբնակետի ներքին-արտաքին լինելու հարցը և նախագծվում այցելուների ամուսնական էպիզը կամ դիմագիծը (նկարագիրը): Ըստ այս մոդելի, եթե զույգերը երկուսն էլ ունենան ներքին վերահսկողություն, հաշվի առնելով նաև մի շարք այլ գործոններ և չափանիշներ, գնահատման արդյունքը դրական է համարվում: Այս մոդելով կարելի է կանխել անարդյունավետ և ոչ հուսալի ամուսնությունները:

**4.** Հետազոտության նորույթը կայանում է նաև վերահսկողության լոկուսի տեսության դրույթների հիման վրա ամուսնական հմտությունների ուսուցման ծրագրի մշակման մեջ:

**Հետազոտության տեսական նշանակությունը**

Հետազոտության կատարած տեսական ընդհանրացումները և իրականացված հարցումների տվյալներն ու դրանց վերլուծությունները թույլ են տալիս բացահայտել վերահսկողության լոկուսի՝ լոկուս կոնտրոլի ներքին կամ արտաքին լինելու ազդեցությունն ամուսնական բավարարվածության մակարդակի բարձրացման կամ նվազեցման գործում, հիմնավորել ներքին կոնտրոլի առավելությունները զույգերի համատեղ կյանքի խնդիրների կարգավորման, դժվարությունների կրճատման և համատեղ կյանքից ունեցած բավարարվածության վրա, տեսականորեն մեկնաբանել և որոշարկել մի շարք փոփոխականների՝ սեռի, տարիքի, կրության աստիճանի և ամուսնության վաղեմության փոխհարաբերությունը հարցվողների տարբեր խմբերի ամուսնական բավարարվածության մակարդակի և լոկուս կոնտրոլի ներքին-արտաքին լինելու հետ: Այդ փոխհարաբերությունների տեսական հիմնավորման ու լուսաբանման հիման վրա հետազոտությունն առաջադրում է համապատասխան մոտեցումներ և լուծումներ:

**Հետազոտության գործնական նշանակությունը**

Տեսական վերլուծությունները և թեստ ռեթեստավորման արդյունքները կարող են օգտագործվել ամուսնական խնդիրների լուծմանը նվիրված հետագա աշխատություններում, նաև նախաամուսնական զույգերին, ընտանիքներին և պրոբլեմատիկ զույգերին տրվող հոգեբանական-խորհրդատվական աջակցության ծրագրերում ու աշխատանքներում, խորհրդատվական-հոգեբանական կլինիկաներում, ամուսնալուծությունը կանխող և բացատրական աշխատանքներ տանող հատուկ կենտրոններում՝ նպաստելով ընտանիքի ամրությանը, ընտանեկան երջանկության ամրապնդմանը, ամուսնալուծությունների քանակի նվազմանը և ընտանեկան տարբեր լարվածությունների և ճգնաժամերի կրճատմանը, որով կխթանվի զույգերի և ամբողջ ընտանիքի անդամների հոգեկան առողջությունը, կենսունակությունն ու զարգացումը:

**Պաշտպանությանը ներկայացվող դրույթները**

**1.** Ամուսնական բավարարվածության մակարդակի վրա ազդում են տարբեր ու բազմապիսի գործոններ, որոնց մեջ իր առանձնակի նշանկությունն ունի վերահսկողության լոկուսի՝ լոկուս կոնտրոլի՝ արտաքին կամ ներքին լինելը:

**2.**Ներքին վերահսկողության լոկուս կամ լոկուս կոնտրոլ ունեցող զույգերն ավելի բարձր բավարարվածություն են զգում ամուսնական կյանքից, քան արտաքին կոնտրոլ ունեցողները:

**3.** Արտաքին վերահսկողության լոկուսը՝ լոկուս կոնտրոլը, տարբեր դժվարություններ և խնդիրներ է հարուցում ամուսնական զույգերի փոխհարաբերություններում՝ նվազեցնելով նրանց բավարարվածությունն ամուսնական կյանքից:

**4.** Բարձրագույն կրթությունը նպաստում է զույգերի ներքին վերահսկողությանը, հետևաբար բարձրացնում նաև ամուսնական բավարարվածության մակարդակը:

**5.** Վերահսկողության լոկուսը՝ լոկուս կոնտրոլը, կարող է արդյունավետ կերպով կանխատեսել և նախանշել ամուսնական բավարարվածության մակարդակը, դրանով նաև կանխատեսել ամուսնության հաջողության ու կայունության աստիճանը:

**6.** Ներքին վերահսկողության հոգեբանական մոտեցումների հիման վրա կազմակերպված թրեյնինգները, աջակցության ծրագրերը և ուսուցումը կարող են դրական արդյունքներ տալ հոգեբանական-խորհրդատվական աշխատանքներում և նպաստել զույգերի ամուսնական բավարարվածության բարձրացման գործին:

**Ատենախոսության կառուցվածքը**

Ատենախուսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից, աղյուսակներից և գծապատկերներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 154 էջ: Օգտագործված գրականության ցանկը բաղկացած է 128 անուն գրքերից ու սկզբնաղբյուրներից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, վարկածը և ենթավարկածները, առաջադրված խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, ձևակերպվել է աշխատանքի գիտական նորույթը, մատնանշվել է աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ներկայացվել են պաշտպանությանը ներկայացվող դրույթները և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը** կրում է «Վերահսկողության լոկուսի՝ լոկուս կոնտրոլի հիմնահարցը հոգեբանական ուսումնասիրություններում| վերնագիրը: Այս գլուխը ներկայացվել է երեք ենթագլուխներով: Նախ անդրադարձ է կատարվել վերահսկողության լոկուս կամ լոկուս կոնտրոլ հասկացության տեսական հիմքերին և սահմանումներին:

Հոգեբանության տեսաբանների կողմից տարբեր սահմանումներ են տրվել լոկուս կոնտրոլին: Լեֆկուրտի տեսանկյունից, սոցիալական հոգեբանության մեջ լոկուս կոնտրոլ է կոչվում այն դաշտն ու մեծությունը, որի շրջանակում մարդիկ կարողանում են (կամ համենայն դեպս իրենք այդպես են ենթադրում) վերահսկողություն իրականացնել մարդկանց և դեպքերի վրա: Լոկուս կոնտրոլ ասելով հասկանում ենք

տարբեր մարդկանց ակնկալիքներն ու պատկերացումները դեպքերի և իրադարձությունների առաջացման սկզբնակետի մասին, այն մասին, թե տվյալ անձն ում կամ ինչն է համարում պատասխանատու իրադարձությունների ու դեպքերի ձևավորման համար: Վերահսկողության սկզբնակետի (լոկուսի) իմաստը կայանում է նրանում, թե անձը որտեղ է փնտրում դեպքերի վերահսկողությունը և դրանց առաջացման պատճառները՝ իր մեջ, թե՝ իր անձից դուրս: Ըստ այդմ, մարդիկ բաժանվում են երկու խմբի՝ ներքին կոնտրոլ ունեցողներ և արտաքին կոնտրոլ ունեցողներ: Ներքին կոնտրոլի մարդիկ հավատում են վարքի ու դեպքերի կառավարման սեփական կարողություններին, մինչդեռ արտաքին կոնտրոլի մարդիկ հավատացած են, որ միջավայրը և ուժեղ մարդիկ են վերահսկում ու դրդում իրենց վարքը:

Աշխատանքի այս հատվածում ուսումնասիրվել են վերահսկողության լոկուսի կամ լոկուս կոնտրոլի փիլիսոփայական, կրոնական, կենսաբանական, սոցիոլոգիական և հոգեբանական հիմքերը:

Հոգեբանները տարբեր մոտեցումեր ունեն մարդու գործունեության ազատության հիմնահարցի վերաբերյալ: Մի խումբն առավել հակված է պարտադիր նախադրյալների ընդունմանը, մյուս խումբը հավատում է մարդու ազատ ընտրության հնարավորությանը, իսկ մեկ այլ խումբն ընտրում է միջին լուծումը: Այդ մոտեցումներից են հոգեվերլուծական, նեոհոգեվերլուծական, հումանիստական, կոգնիտիվ, վերազրման, բիհեվիորիստական, սոցիալ-կոգնիտիվ, սոցիալական յուրացման և ընտրության տեսությունները:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում են ամուսնական խնդիրների հոգեբանական մեկնաբանությունները և մոտեցումները:

Հոգեբանական տարբեր ուղղություններում ուսումնասիրվող գլխավոր հարցերից մեկը ամուսնական կյանքի կոնֆլիկտներն ու անհամաձայնություններն են: Ամուսնական կյանքի խնդիրների վերաբերյալ հոգեբանական տարբեր տեսությունների մոտեցումները հետևյալն են.

- Հոգեվերլուծական մոտեցում, որն ամուսնական կյանքի դժվարությունների հիմքը մանկության շրջանից մնացած ակնկալիքների և սպասելիքների մեջ է փնտրում:
- Վարքային (բիհեվիորիստական) *տեսություն,* որն ամուսնական տարաձայնություններն ու կոնֆլիկտները մեծ մասամբ բնութագրում է իբրև զույգերի կողմից միմյանց նկատմամբ կատարվող պարգևատրման կամ պատժի գործընթացի արդյունք:
- Ճանաչողական-վարքային (կոգնիտիվ-բիհեվիորիստական) *տեսություն,* ըստ որի ամուսնական կյանքի դժվարություններն սկսվում են զույգերի բացասական մտքերից, թյուր հիմնավորումներից և անտեղի ակնկալիքներից:
- Բանական-հուզական (ռացիոնալ-էմոցիոնալ) տեսություն**,** ըստ որի ամուսնական կոնֆլիկտների գլխավոր դրդապատճառը անիրատեսական և ոչ-տրամաբանական կարծիքներն ու համոզմունքներն են:

- Հումանիստական տեսություն, որը շեշտը դնում է մտքում ձևավորված կաղապարների ու փորձի, հատկապես, նախնական կամ առաջնային հույզերի արտահայտման ու արտահայտման վրա:
- Համակարգային տեսություն (Ընտանեկան խորհրդատվություն), որն ընտանիքը դիտում է իբրև մեկ ամբողջական համակարգ և իր աշխատանքներում ներգրավում է ընտանիքի բոլոր անդամներին և ընտանեկան բոլոր կապերը:
- «Ռեալիթի թերապիա» ( կամ «Ընտրության տեսություն»)

Գլասերը (1995,1998) հոգեբանության մեջ մի նոր տեսության՝ ընտրության տեսության հիմքը դրեց, որով զգալիորեն նպաստեց մարդկային վարքը տարբեր պայմաններում և իրավիճակներում ճանաչելու գործին: Այս տեսությունը բացատրում է, թե մենք ինչպես և ինչու ենք կատարում մեր կյանքի բախտորոշ ընտրությունները: Ենթադրվում է, որ մեր վարքը մեր իսկ վերահսկողության տակ է գտնվում: Ըստ Գլասերի, մարդիկ այն ժամանակ են դժվարության մատնվում, երբ փորձում են վերահսկել ուրիշներին: Նրա տեսակետից, մարդկանց և նրանց վարքագծի վերահսկումը կատարվում է «վերահսկման (կոնտրոլի) հոգեբանության» շրջանակներում:

Այս գլխի մյուս ենթագլուխն անդրադառնում է վերահսկողության լոկուսի տարբեր կողմերին և գործառույթներին:

Գլասերն իր ընտրության տեսության մեջ (1995-2007) մի շարք մեթոդներ է առաջարկել սեփական անձը և ուրիշներին վերահսկելու համար: Նա վերահսկողության գործոնները երկու խմբի է բաժանել և դրանք անվանել «1.Արտաքին վերահստղության տեսության (կամ մոտեցման) յոթ վնասակար գործոններ 2. Ընտրության տեսության յոթ դրական գործոններ»:

Լոկուս կոնտրոլը տարբեր գործառույթներ ունի անձնական ու հասարակական կյանքում: Վերահսկողության լոկուսը՝ լոկուս կոնտրոլն ազդում է ֆիզիկական առողջության, հոգեկան առողջության, սիրո, սեռական հարաբերությունների, ամուսնական դավաճանության վրա:

Ռոթերի կարծիքով, վերահսկման սկզբնակետի հարցում իգական և արական սեռերի մոտ նկատվող տարբերությունները որոշ չափով պայմանավորված են տվյալ մշակույթում յուրաքանչյուր սեռի համար սահմանվող դերով: Ընդհանուր առմամբ, կանայք և տղամարդիկ տարբեր կերպ են մեկնաբանում լոկուս կնտրոլի կամ վերահսկման սկզբնակետի հարցը: Ներքին վերահսկում ունեցող կանայք և տղամարդիկ ավելի ինքնավստահ անհատականություն և բարձր ինքնագնահատական ունեն, քան արտաքին վերահսկման մարդիկ:

Աշխատանքի այս հատվածում ներկայացվում են նաև լոկուս կոնտրոլի և ամուսնական բավարարվածության հարաբերակցության վերաբերյալ նախկինում կատարված ուսումնասիրությունները (թեմայի մշակվածության աստիճանը):

Սույն հետազոտության **երկրորդ գլուխը** վերնագրված է «Ամուսնական բավարարվածության հոգեբանական հիմքերը»: Այն ներկայացվել է չորս

ենթագլուխներով: Նախ ներկայացվում են ամուսնություն, ընտանիք երևույթները, ընտանիքի տարբեր տեսակները և գործառույթները:

Ամուսնու ընտրությունը և ամուսնությունը կյանքի կարևորագույն որոշումներից են, սակայն այդ որոշումը կայացվում է այն ժամանակ, երբ մարդու գիտելիքներն ու ինֆորմացիան, փորձն ու հասունությունը դեռևս բավարար չեն նման մեծ որոշում կայացնելու համար: Ամուսնու ընտրությունը կարող է բավականին բարդ պրոցես լինել, որի ժամանակ մարդը մեկ առ մեկ տարրալուծում է անձնային, հոգեբանական, սոցիալական և հուզազգացական տարբեր գործոնները: Ցավոք, ոչ բոլորն են այսպես մանրակրկիտ ընտրություն կատարում, փոխարենը միայն սեռական գրավչությունից ու ձգողականությունից դրդված են կայացնում ամուսնության որոշումը:

Ծնունդից հետո ամուսնությունը համարվում է մարդու կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկը և կյանքի փուլերի բեկումնային թռիչքը, քանի որ մարդը մտնում է այնպիսի հարաբերության մեջ, որի անհրաժեշտ նախապայմանը ամուսնու և զավակների հանդեպ պատասխանատվությունը և հանձնառությունն է: Եթե այս դաշինքը կատարվում է «հարմար» ընտրության հիման վրա, այն հաճելի և պրոգրեսիվ է դառնում, սակայն «ոչ-ճիշտ» ընտրության դեպքում, վերածվում է տանջալից փոխհարաբերության՝ խոչընդոտելով անձի զարգացման ու անհատական ընդունակությունների կատարելագործման ուղին:

Իրականում, ամուսնությունը սոցիալական մի փոխանակում է, որով երաշխավորվում է սոցիալական գոյատևումը: Այն հիմնված է «այլ անձին սիրելու» սկզբունքի վրա: Կարելի է ասել, որ ամուսնությունն ունի կենսաբանական, հոգեբանական և սոցիալական հիմք, որին ավելանում է նաև մշակութայինը: Ընտանիք եզրույթը տարբեր մշակույթներում տարբեր իմաստներ է կրում: Մերիամ Վեբստեր բուհական բառարանը, Գլադինգը, Բարր և իր գործընկերները, Գոլդենբերգն և Գոլդենբերգը ներկայացրել են ընտանիքի իրենց սահմանումները: Ընտանիքը սոցիալական և համամարդկային առաջին կառույցներից է, որն անհրաժեշտ է մարդու ֆիզիկական և հուզազգացական կարիքները հոգալու և հասարակության գոյատևման համար: Այն սոցիալական բոլոր կառույցներից առավել բնականն ու հարազատն է:

Մարդն իր ծագման առաջին իսկ շրջանից խորապես զգացել ու հասկացել է, որ ընտանիքն է մարդու ամենալավ օթևանը և խաղաղության ու հանգստության հանգրվանը: Ամենօրյա քաշքշուկների պատճառած հոգեբանական շատ վերքեր բուժվում ու մխիթարվում են առողջ ու նորմատիվ ընտանիքում: Այդ է պատճառը, որ հետազոտությունների տվյալներն արձանագրում են, որ ամուսնացած մարդիկ ընդհանուր առմամբ ավելի առողջ և ավելի երջանիկ են, քան չամուսնացածները: Ընտանիքն ընդհանրապես փոխօգնության, մխիթարանքի, վերականգնման և բուժման օջախ է:

Բոլոր մշակույթներում ընտանիքը համարվում է անձի «ինքնությունը», անհատականությունն ու անձնավորությունը ձևավորող հիմնական գործոն:

Հոգեբաններից ավելի վաղ սոցիոլոգներն են զբաղվել ընտանիքների տեսակների կամ տիպաբանության հարցերով: Նրանք սահմանել են ընտանիքի հետևյալ

տեսակները՝ բջջային կամ պարզ ընտանիքները, երկանդամ ընտանիքներ, միածնող ընտանիքներ, միայնակ ապրող մեծահասակի ընտանիք, եռասերունդ ընտանիքներ, միջին տարիքի կամ ծերունական տարիքին հասած զույգերի ընտանիքներ, ազգակցական ցանց կամ գերդաստան ընտանիքներ:

Պատմության ընթացքում ընտանիքը՝ որպես առաջին հասարակական կառույց, կենսական դեր է ունեցել մարդ արարածի զարգացման, առաջադիմության և սոցիալականացման գործընթացում: Ընտանիքն, անշուշտ, ամենակարևոր կառույցն է, որի հիման վրա կատարվում է երեխայի ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացումը և ձևավորվում նրա ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական հավասարկշռությունը: Ընտանիքի ամենապարզ ֆունկցիան երեխաներ ունենալն ու դաստիարակելն է: Ընտանիքի ֆունկցիաների շարքում է նաև սոցիալականացումը և օրենքների, կանոնների, դերերի, մշակութային արժեքների հետ, ընտանիքն իր փոխշփումների և փոխհարաբերությունների միջոցով վերածվում է սոցիալական էակի: Ընտանիքը տարբեր առումներով (տնտեսական, հասարակական, մշակութային, հոգեբանական, ֆիզիկական, գաղափարախոսական և բարոյական) տարբեր ֆունկցիաներ է կատարում:

Արդյունավետության առումով ընտանիքները բաժանվում են արդյունավետ և ոչ-արդյունավետ ընտանիքների:

Այս գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում են ամուսնական զույգերի փոխհարաբերությունների հոգեբանական խնդիրները: Ամուսնական կապը մարդկային ամենաբարձր հաճույքների, միևնույն ժամանակ տառապանքի ամենամեծ աղբյուրներից մեկն է: Ոչ մի փոխհարաբերություն ամուսնական կապի պես տարաձայնությունների և հակադրությունների առիթ չի տալիս, քանի որ ամուսնական կյանքում մարդիկ ամենալայն ու բազմակողմ հարաբերություններն են ծավալում իրար հետ, հետևաբար հակադրությունները շատ են լինում:

Գլասերի կարծիքով ամուսնական կոնֆլիկտներն առաջանում են ամուսինների պահանջմունքների և դրանց բավարարման մեթոդների տարբերությունից, եսասիրությունից և միայն սեփական անձի կարևորումից, ամուսնության հանդեպ անպատասխանատու վարքից և վարքային սխեմաների կիրառումից: Յունգը ամուսնական կոնֆլիկտների պատճառը տեսնում է անհատական տարբերությունների հանդեպ հակազդումից, որը եթե սուր դրսևորում ստանա և արտահայտվի զայրույթով, թշնամանքով, քենով, ատելությամբ, խանդով և խոսքային ու ֆիզիկական վատ վերաբերմունքով, այսինքն ստանա կործանիչ և ոչնչացնող բնույթ, այդ դեպքում ահազանգում է ոչ-սովորական իրավիճակի մասին: Թի Բեքը ամուսնական անհամաձայնությունների և հակառակությունների հիմնական պատճառներից մեկը տեսնում է կնոջ և տղամարդու տարբեր ակնկալիքների և միմյանց դերերի մասին տարբեր պատկերացումների մեջ:

Ամուսնական կյանքում առավել հաճախ հանդիպող խնդիրները հետևյալն են.

- Սեռական խնդիրներ ամուսնական կյանքում
- Ֆինանսական հարցեր

- Հաղորդակցական խնդիրներ
- Ամուսնու ընտանիքի և հարազատների հետ կապված հարցեր
- Հանգստի և ժամանցի կազմակերպման հարցեր
- Երեխաների հետ կապված հարցեր
- Աշխատանքի բաժանմանը վերաբերող հարցեր
- Ամուսինների կրոնական հավատալիքների ու հայացքների հետ կապված խնդիրներ:

Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև ամուսնական կյանքի բավարարվածության վրա ազդող գործոններին: Մեր հետազոտության մեջ մենք ընտրել ենք Հավքինզի տված սահմանումը, ով ամուսնական բավարարվածության համար տվել է հետևյալ սահմանումը. «Կնոջ և տղամարդու կողմից ապրված հաճույքի և ուրախության առարկայական զգացում, երբ հաշվի են առնվում իրենց ամուսնության բոլոր կողմերը»:

Գլասերն (1998) առաջարկել է մի մոդել, որով հնարավոր է բացատրել, թե ինչպես են ամուսնությունները շարունակում մնալ բավարարող և գոհացուցիչ կամ ինչպես են հետագայում դառնում անբավարար և աններդաշնակ:

Ընդհանուր առմամբ ամուսնական բավարարության վրա ազդող գործոնները ներկայացվում են հետևյալ աղյուսակում.

Երկրորդ գլխի վերջում խոսվում է ամուսնական հարաբերությունների վերահսկման և կարգավորման մասին: Այստեղ ներկայացվում է Օլսոնի կողմից (1987) նախագծված ծրագիրը, որը ներառում է վեց հիմնական քայլեր՝ զույգերի կարողությունների ընդլայնում և զարգացում, ամուսնության մեջ հաղորդակցական հմտությունների խթանում, զույգերի և ընտանիքների սեփական նպատակների ընդլայնում, ընտանիքի ֆինանսական բյուջետավորման նախագծերի մշակում, ամուսնական կոնֆլիկտների լուծման տասը քայլերի ուսուցում և ընտանիքի գլխավոր խնդիրների բացահայտում:

Ապա ներկայացվում են ներքին վերահսկողության (ներքին կոնտրոլի) դրույթները ամուսնական կյանքի կարգավորման գործում, ներքին կոնտրոլի հմտությունները և մեթոդներն ամուսնական փոխհարաբերությունների կարգավորման գործում:

Աշխատանքի երրորդ գլուխը կրում է _Հետազոտության մեթոդիկան և արդյունքները| խորագիրը և ներկայացվել է երեք ենթագլուխներով: Նախ ներկայացվել է հետազոտության մեթոդիկան:

Հետազոտության պոպուլյացիան 100 ամուսնական զույգեր են կազմել, որոնք պատահականության սկզբունքով և «Կլաստերային» մեթոդով ընտրվել են Իրանի Մազանդարան նահանգի Մանկավարժական համալսարանում սովորող ամուսնացած ուսանողներից: Կատարված հարցումից հետո ընտրվել են 20 զույգեր, որոնք պատահականորեն բաժանվել են երկու խմբի՝ 10 զույգեր ներառվել են փորձարկվողների խմբում և 10 զույգեր ստուգիչ խմբում (միջին տարիքը կազմել է 21.89 (SD=7.93):

Սույն հետազոտության մեջ ուսումնասիրվող փոփոխականների չափման համար կիրառվել են հինգ գործիքներ, որոնց հավաստիության և հուսալիության մակարդակը կատարված փորձարկումների արդյունքում բավարար է գնահատվել:

1. Էնրիչի (ENRICH)՝ ամուսնական բավարարվածությունը գնահատող թեստը,
2. Սփայների ամուսնական հարմարումը գնահատելու հարցաթերթը (DAS),
3. Ռոթերի՝ լոկուս կոնտրոլը՝ վերահսկողության լոկուսը գնահատող թեստը (I-E),
4. Մեր կողմից կազմված հարցաթերթը,
5. Ժողովրդագրական տվյալների հարցաթերթը:

Փորձարկվող խմբում իրականացվել են լոկուս կոնտրոլի և ամուսնական բավարարվածության խթանմանն ուղղված ամուսնական հմտությունների ուսուցում, որը հիմնված է Գլասերի ընտրության տեսության, Ռոթերի լոկուս կոնտրոլի տեսության և Էլտոնի ամուսնական բավարարվածության տեսության վրա: Ստուգիչ խմբում որևէ միջամտություն չի կատարվել: Ներքին վերահսկողության հոգեբանության դրույթների վրա հիմնված ուսուցողական միջամտությունն իրականացվել է 16 սեանսների ընթացքում: Ուսուցման ծրագրի ավարտից հետո երկու խմբերում կրկին լոկուս կոնտրոլի և ամուսնական բավարարվածության թեստերն (ռի-թեստ) են կիրառվել, որից հետո համեմատվել ու վերլուծվել են ուսուցողական ծրագրի սկզբում և վերջում կատարված թեստերի արդյունքները:

Այնուհետև ներկայացվել է հետազոտության տվյալների և արդյունքների վիճակագրական վերլուծությունը՝ համակարգչային SPSS ծրագրի միջոցով: Ներկայացվել են միջինների հաշվարկումը, ստանդարտից շեղումը, Պիրսոնի համահարաբերակցության գործակիցը, Անովա և Ֆիշերի փորձարկումը, անկախ t-ի փորձարկումը, բազմագործոնային ռեգրեսիոն վերլուծությունը:

Աշխատանքի վերջում ներկայացվում է հետազոտության արդյունքների քննարկումը և ամփոփումը:

Հենվելով մեր հետազոտության արդյունքների և վերահսկողության լոկուսի տեսական դրույթների վրա՝ մենք կազմել և առաջարկել ենք ամուսնական խնդիրները ներկայացնող հետևյալ մոդելները՝ ամուսնական բավարարվածության հետ ներքին և արտաքին վերահսկողության տարբեր գործոնների համահարաբերակցությունը սահմանելու նպատակով, որտեղ լավագույն կերպով ներկայացվել են ներքին և արտաքին վերահսկողության գործոնների համահարաբերակցությունը ամուսնական բավարարվածության հետ:

**Արտաքին լոկուս կոնտրոլի հոգեբանական գործոնների և ամուսնական անբավարարվածության համահարաբերակցության մոդել**




**Ներքին լոկուս կոնտրոլի հոգեբանական գործոնների և ամուսնական բավարարվածության համահարաբերակցության մոդել**




# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Փորձարկվող խմբի և ստուգիչ խմբի արդյունքների համեմատությունը ցույց տվեց, որ վերահսկողության լոկուսի հմտությունների ուսուցումը արդյունավետ է եղել ուսանողների՝ ամուսնական կյանքից բավարարվածության մակարդակի վրա, այն իմաստով, որ փորձարկվող խմբում ներքին վերահսկողության բարձրացմամբ՝ նվազում են ամուսնական կյանքից անբավարարվածությունն ու անհարմարվողականությունը և խթանվում բավարարվածությունը, հարմարումը, սիրո արտահայտումը, սեռական փոխահարբերությունները և ամուսնական միասնությունը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ զույգերի ներքին վերահսկողության լոկուսի բարձրացմամբ՝ ամուսնական կյանքից բավարարվածությունը ևս բարձրանում է:

2.Վերահսկողության լոկուսի և ամուսնական կյանքից բավարարվածության փոխահարաբերության ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ ուսանողների ներքին վերահսկողության լոկուսի և ամուսնական կյանքից բավարարվածության միջև առկա է ուղիղ փոխկապակցվածություն/ (համահարաբերակցություն), այն իմաստով, որ ներքին վերահսկողության լոկուս ունեցող զույգերը ամուսնական կյանքից ավելի բարձր բավարարվածություն ունեն, այսինքն ինչքան ավելի բարձր է զույգերի ներքին

վերահսկողության լոկուսը, այնքան բարձր է նրանց ամուսնական կյանքից բավարարվածության մակարդակը:

3.Զույգերի կրթության մակարդակի և ամուսնական կյանքից բավարարվածության մակարդակի համեմատությունը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթություն ունեցող զույգերը ավելի ցածր մակարդակի կրթություն ունեցող զույգերի համեմատությամբ ամուսնական կյանքից բավարարվածության ավելի բարձր մակարդակ են գրանցել:

4.Զույգերի ներքին վերահսկողության և կրթության մակարդակի միջև գրանցվել է նշանակալի տարբերություն, այսինքն բուհական կրթություն ունեցող զույգերը կրթության ավելի ցածր մակարդակ ունեցող զույգերի համեմատությամբ վերահսկողության ներքին լոկուսի ավելի բարձր մակարդակ ունեն:

5. Զույգերի տարիքի և ամուսնական կյանքի տևողության և նրանց ամուսնական կյանքից բավարարվածության միջև չի գրանցվել նշանակալի փոխկապակցվածություն/համահարաբերակցություն, այսինքն տարիքի առաջացումը և ամուսնական կյանքի տևողության մեծացումը ազդեցություն չունի ամուսնական կյանքից բավարարվածության մակարդակի վրա:

6.Երկու սեռերի և վերահսկողության լոկուսի ուսումնաիրությունը ցույց է տալիս, որ կանայք և տղամարդիկ վերահսկողության տեսակի (ներքին-արտաքին) և մակարդակի առումով չունեն նշանակալի տարբերություն:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր հետազոտությունից ակնկալվում է, որ ըստ ձեռք բերված արդյունքների և բացահայտված դրույթների, պետք է որոշակի լուծումներ և ուղիներ առաջադրվեն հասարակության ներկա խնդիրների լուծման կամ ապագա դժվարությունների կանխատեսման ու կասեցման ուղղությամբ: Քանի որ մեր հետազոտությունը նպատակի առումով կիրառական է, ուստի ստացած տվյալների հիման վրա ներկայացնում ենք երեք գործնական առաջարկություններ:

1.Ամուսնության դիմագծի կամ նկարագրի պատկերում (նախաամուսնական խորհրդատվություն)՝ ըստ լոկուս կոնտրոլի

«Հարմար» զուգընկերոջ ընտրությունը չափազանց կարևոր է կայուն և հաջողված ամուսնություն ունենալու համար: Այս նպատակով անհրաժեշտ է իմանալ ամուսնության պատրաստվող երկու կողմերի լոկուս կոնտրոլի տեսակը: Այս նպատակով զույգերին առաջարկվում է նախքան ամուսնանալը դիմել ամուսնական և ընտանեկան հարցերի խորհրդատու հոգեբանի օգնությանը և կազմել ամուսնության ընդհանուր նկարագիրը կամ սխեման: Խորհրդատվության առաջին սեանսի ընթացքում խորհուրդ է տրվում կատարել Ռոթերի լոկուս կոնտրոլի գնահատման թեստը և Լոնսոնի

թեստը, որով կճշտվի զույգերից ամեն մեկի լոկուս կոնտրոլի տեսակը, այսինքն ներքին կամ արտաքին լինելը: Խորհրդատու հոգեբանը համեմատելով երկու կողմի լոկուս կոնտրոլի համապատասխանությունը, նաև հաշվի առնելով մի շարք այլ չափորոշիչներ ու չափանիշներ, կորոշի նրանց ամուսնության նպատակահարմարությունը: Մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ ներքին լոկուս կոնտրոլի հիման վրա գծված ամուսնությունների դիմագիծը կարող է հաջող և կայուն ամուսնություն խոստանալ:

Նկատի առնելով այս հետազոտության արդյունքները, հոգեբանները և խորհրդատուները կարող են իրենց դիմողներին աջակցել՝ ճիշտ ամուսին ընտրելու հարցում: Նրանք կարող են հաշվի առնել մի շարք անհրաժեշտ չափանիշներ և դրան զուգահեռ կատարել լոկուս կոնտրոլի ներքին կամ արտաքին տեսակի բացահայտման թեստեր՝ որոշելով ամուսնության համար պատրաստվող զույգերի լոկուս կոնտրոլի տեսակը:

**Մոդել 3.**

**Ներքին լոկուս կոնտրոլի հոգեբանական դրույթների վրա հիմնված մոդել՝ համապատասխան ամուսնու խելամիտ ընտրության փուլային գործընթացի համար**



2.Ամուսնական կյանքի հմտությունների ուսուցում ըստ լոկուս կոնտրոլի

Մեր կյանքի տարատեսակ փոխհարաբերություններում կայուն և բավարարված ամուսնական կապը ամենահազվագյուտներից է:

Հետազոտությունները մատնանշում են, որ արտաքին լոկուս կոնտրոլը ամուսնական կյանքի մտատանջության ու տառապանքների հիմնական աղբյուրն են: Գլասերն այն ներկայացնում է որպես ամուսնական կյանքի քաղցկեղ: Ցավոք, քչերն են տեղյակ այդպիսի հոգեբանության կործանարար հետևանքների մասին:

Ուրեմն և՛ արտաքին, և՛ ներքին լոկուս կոնտրոլի մասին համապատասխան ուսուցումը թե՛ անհատական կերպով և թե՛ նրա դրույթների ներդրումն ու կիրառումը թերապիայի կամ թրեյնինգի գործընթացներում կարող է նպաստել երջանիկ, կայուն և կենսունակ կյանք ստեղծելու նպատակին: Առաջարկվում է զույգերի և ամուսինների համար կազմակերպել լոկուս կոնտրոլի իմաստի և նշանակության վերաբերյալ հատուկ դասընթացներ և խորհրդատվական աշխատանքներ:

3.Ամուսինների խորհրդատվություն՝ ներքին լոկուս կոնտրոլի հիման վրա

Այս խորհրդատվությունը ներառում է բոլոր այն զույգերին, որոնց մեծ մասը թերևս իրենց համատեղ կյանքն սկսել են երջանիկ, սակայն ներկայումս ունեն անբավարար ու տհաճ հարաբերություններ, բողոքում են իրենց տխուր ու անուրախ կյանքի համար և միմյանց մեղադրում ստեղծված վիճակի պատճառով: Նման զույգերը բացմաթիվ անգամ մտածել են բաժանվելու և ամուսնալուծության մասին, սակայն տարբեր պատճառներով, (երեխաներ, ընտանիք, կրոնական ու բարոյական կաշկանդումներ կան անձնական վախեր և այլ նկատառումներ) հրաժարվել այդ մտքից: Նման զույգերի համար առաջարկվում է կիրառել Գլասերի «Վարքի ընտրության» տեսության դրույթները: Մեր կլինիկական սեփական փորձը ևս հաստատում է այս տեսության արդյունավետությունը: Երբ զույգերը կամ նրանցից մեն ու մեկը գիտակցում է իր սեփական վարքի կառավարման և փոփոխման դրական հետևանքները և կիրառում այդ մեթոդը, արձանագրվում է հրաշալի լավ արդյունքներ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած հետևյալ աշխատանքներում**

**1.** Ա. Ասղարիգանջի, The relationship between the functions of locus of control and sexual satisfaction of couples, _Աստղիկ| հրատարակչություն, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու 1(54), Երևան, 2013, էջ 272-276:

**2.** Ա. Ասղարիգանջի, Լոկուս կոնտրոլը և վարքի հիմքում ընկած դրդապատճառները, _Աստղիկ| հրատարակչություն, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու 3(52), Երևան, 2012, էջ 233-241:

**3.** Ա. Ասղարիգանջի, Ամուսնական կոնֆլիկտների լուծման հոգեբանական տարբեր մոտեցումները, Մանկավարժ հրատարակչություն, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան _Գիտական տեղեկագիր| 1(18), Երևան, 2013, էջ 34-42:

**4.** A. Asghariganji, K. Vardanyan, Sh. Navabinezhad, The relationship between intercourse frequency, orgasm frequency, age and length of marriage with sexual satisfaction,

_Լիմուշ| հրատարակչություն, Տեսական և կլինիկական բժշկության հարցեր, Գիտագործնական հանդես, 4 (80), Երևան, 2013, էջ 46-50:

**5.** A. Asghariganji, K. Vardanyan, Sh. Navabinezhad, The effectiveness of locus of control in decrease marital dissatisfaction of couples, _Լիմուշ| հրատարակչություն, Տեսական և կլինիկական բժշկության հարցեր, Գիտագործնական հանդես, 4 (80), Երևան, 2013, էջ 73-76:

**6.** A. Asghariganji, K. Vardanyan, Sh. Navabinezhad, The relationship between attachment styles and sexual satisfaction of couples, Islamic Association of Iranian Students in Armenia, The second Scientific-Research Conference of Iranian Students, 2013, pp. 293-298.

**7.** A. Asghariganji, K. Vardanyan, Sh. Navabinezhad, The compared between education level and gender with self-esteem, Islamic Association of Iranian Students in Armenia, The second Scientific-Research Conference of Iranian Students, 2013, pp. 318-324.

## АСКАРИ АСГАРИГАНДЖИ
## “ВЗАИМООТНОШЕНИЕ ЛОКУС КОНТРОЛЯ И БРАЧНОЙ УДОВЛЕТВОРЕННОСТИ”

Диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 – Общая психология, теория и история психологии, психология личности.

Защита диссертации состоится “06” мая, 2014г. в 12.00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

## РЕЗЮМЕ

**Актуальность исследования:** Проведенные исследования доказали, что брачные отношения в современное время ослабли. Эти исследования не обращяются к причинам этой слабости и распадов супружеских пар. До настоящего времени вопросы связанные с успешными, удовлетворительными или неудачными брачными отношениями не были определены и обоснованы.

В брачной удовлетворенности большую роль играют различные факторы, среди которых фактор локус контроля занимает особое место. В 1954 году Джулиан Роттер впервые официально использовал понятие “локус контроль”. Он заметил, что некоторые люди ищут мотивацию и стимулирующие факторы в себе, другие во внешних импульсах. Таким образом, он разделил людей на две группы: люди, которые имеют внутренний и люди которые имеют внешний локус контроль.

Актуальность нашего исследования обусловлена важностью роли локуса контроля в семейной жизни, необходимостью выявления источников проблем в браке и актуальностью этих вопросов в иранском обществе.

**Цель исследования:** Целью исследования является изучение и определение роли и влияния внешнего и внутреннего локус контроля на семейную жизнь и на уровень удовлетворенности браком.

**Гипотеза исследования:** Если мы будем стимулировать внутренний локус контроль среди семейных пар, уровень их удовлетворенности браком увеличится.

**Объектами исследования** являются психологические предпосылки и компоненты удовлетворенности пар браком и их локус контроля.

**Предметом исследования** является изучение и анализ влияния внешнего и внутреннего локус контроля в повышении удовлетворенности браком и решении их жизненных проблем. Предмет исследования также включает в себя изучение корреляции между переменными пола, возраста, продолжительности брака, уровня образования, локус контроля и удовлетворенности браком.

**Выборка исследования:** Субъекты нашего исследования были выбраны из педагогического университета города Мазандаран в Иране. Было выбрано 100 семейных пар (всего 200 студентов). Далее, чтобы точнее оценить влияние локус контроля на брачную удовлетворенность, на экспериментальной основе были выбраны 20 брачных пар. После того, как изучаемые переменные были перевоплощены в однородные, эти пары, в случайном порядке, были разделены на две группы, 10 пар в экспериментальной группе, 10 пар в контрольной группе.

**Научная новизна исследования** обусловлена следующими факторами:

1. В нашем исследовании впервые в Иране с новым подходом были проанализированы и оценены причины семейных проблем и уровень удовлетворенности браком с учетом внутреннего и внешнего локус контроля и переменных пола, возраста, уровня образования и продолжительности брака.

2. В этом исследовании мы представили новый психологический подход к семейной терапии, которая основана на факторе локус контроля.

3. Мы представили модель семейной консультации для пар, которые принимают решение жениться. С помощью этого моделя мы определяем применение у пары внутреннего или внешнего локус контроля, а затем составляем соответствующий план семьи.

4. Мы также разработали учебный план приобретения супружеских навыков, который основан на теории локус контроля.

**Теоретико-методологические основы исследования** включают "Теорию социального обучения" Джулиана Роттера, "Теорию выбора" Уильяма Глассера, исследования и подходы к вопросу удовлетворенности браком Энрича, а также проведенные различными специалистами и исследователями работы, связанные с вопросами удовлетворенностью браком, контролем поведения, межличностными отношениями и семейными проблемами.

**Теоретическое значение исследования:** Суммируя все концептуальные положения, теоретическую базу, анализ полученных данных мы представили комплексную систему, которая может внести вклад в дальнейшее развитие и уточнение психологических теорий.

**Практическое значение исследования:** Теоретический анализ и результаты проведенного исследования могут быть использованы в проводимых в этой области дальнейших исследованиях. Полученные данные могут быть полезными в консалтинговых клиниках, в специальных центрах, которые занимаются предотвращением разводов проблемных пар и предлагают семейное консультирование парам, которые решают жениться. Таким образом, полученные данные могут способствовать стойкости и счастья в семьи, уменьшению числа разводов, сокращению напряженности и кризиса в семье, что в свою очередь приведет к повышению уровня психического здоровья в семье, а также к жизнеспособности и развитию членов семьи.

**Объем и структура работы**. Представленная диссертационная работа состоит из введения, 3-х глав, заключения и списка использованной литературы. Общий объем составляет 154 страницы.

**По теме диссертации опубликовано 10 научных статей и одна монография.**

ASKARI ASGHARIGANJI

## THE INTERACTION OF LOCUS OF CONTROL AND MARITAL SATISFACTION

Dissertation thesis for the degree of candidate of psychological sciences

Area of specialization: "General psychology, teory and history of psychology, personality psychology"

The dissertation defense will be held on “06” May 2014, at12:00 at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan during the session of the working HCC Philosophy and psychology 064 specialized council

Address: 0010, 17 Tigran Mets str., Yerevan.

## SUMMARY

**The actuality of the research:** Nowadays many researches have proven the fact that marital relations have weakened. These researches do not refer to the reason of weakness and divorses of marital couples. Successful and satisfactory marital relations or not successful marriages and marital difficulties have not been defined yet and many questions need to be defined and explained.

Different factors and variables play their role in marital satisfaction. In this regard the factor of locus of control has its special place.

The concept of locus of control for the first time was formally used in 1954 by Julian Rotter. He noticed that some people search for motivation and stimulating factors in themselves, and some others search them in external impulses. In this way he devided people into two groups, those who have internal locus of control and those who have external locus of control.

The actuality of our research is conditioned by the important role of locus of control in family life, the necessity of identifying the sources of marital problems and the urgency of these issues in Iranian community.

**The aim of the research** is to study and identify the role and the effect of internal and external locus of control on marital life and on the level of marital satisfaction.

**The hypothesis of the research:** If we stimulate the internal locus of control among marital couples their level of marital satisfaction will increase.

**The objects of the research** are psychological background and components of couples' marital satisfaction and their locus of control.

**The subject of the research** is the study and analysis of the impact of internal and external locus of control in increasing the marital satisfaction of couples and solving their life problems. The subject of this research also includes the study of correlation between different features such as gender, age, years in marriage, level of education, and locus of control, marital satisfaction.

**The sample of the research:** The subjects of our research have been selected from the Pedagogical University of Mazandaran from Iran. 100 married students (who were also teachers) were randomly selected with their spouses. Further, in order to better evaluate the influence of locus control on marital satisfaction, on an experimental basis, 20 couples were selected. Once the studied variables have been reincarnated into homogeneous, these pairs at random were divided into two groups, 10 couples in the experimental group, 10 couples in the control group.

**The scientific novelty of the research** is conditioned with the following:

1. In our research the reasons of marital problems and the level of marital satisfaction were analized and assessed with a new approach (in Iran) taking into consideration the internal or external locus of control and variables of gender, age, education level and lasting of marriage.
2. In this research we have proposed a new psychological approach in family therapy which is based on the locus of control.
3. We have presented a model of marital consultation for the couples who want to get married. In this model we assess whether the locus of control is internal or external and then the marital plan is designed.
4. We have also developed a teaching plan of marital skills which is based on the theory of locus of control.

**The theoretical-methodological background of the research** include "The social learning theory" of Julian Rotter, "Choice theory" of William Glasser, Enrich's studies and approaches about marital satisfaction, and also different studies related to marital satisfaction, control of behavior, interpersonal relations and family issues made by different specialists and researchers.

**The theoretical significanse of the research**: Summarizing all the conceptual positions, theoretical base, the analysis of obtained data we presented a complex system, which may contribute to the further development and specification of psychological theories.

**The practical significance of the research:** The theoretical analysis and the results of conducted study can be used in further researches in related fields. They can also be helpful in consulting clinics, in centers which prevent divorces and provide marital consultation to couples who just decided to get married, among families and problematic couples. In this way the obtained data can contribute to family firmness, happiness in family, decreasing the number of devorces, tensions and crisis reduction which can boost psychological health, vitality and development of family members.

**The volume and structure of the work:** The presented thesis consists of an introduction, three chapters, conclusion and references. The total volume of the thesis is 154 printed pages.

**Ten scientific articles and a monograph were published on the topic of the thesis.**

